Այս հեռագիրները արձագանգ գտան զլխաւորապէս զօրամասերի և այլազգիների մէջ։ Ալեքսանդրապոլից ստացած հրամանի վրա, մայիս 9-ին, զլխաւորապէս աւտո-զարաժի ծառայողներից, ռազմա-յեղափոխական կոմիտէ ստեղծուեց Կարսում և մի գրութեամբ դիմեց նահանգապետ Ղորդանեանին, բերդապետ Փիրումեանին և քաղաքագլուխ Նոհրատեանին՝ պահանջելով 24 ժամայ ընթացքում կտրել ամէն կապ Երևանի հետ, ճանաչել Ալեքսանդրապոլի խորհրդային կառավարութիւնը և չարունակել իրենց պաշտօնավարութիւնը։ Նման կարգադրութիւն հասաւ և Մուսայէլեանից ու Մելքոնեանից։ Ըմբոստների կողմն անցան և բերդի զօրքերի մի մասը և մալական ու յոյն բնակչութիւնը։ Երկու օր քաղաքը մնաց խռովարարների ձեռքը։

Կարսից չարժումը փոխադրուեց Սարըղամիշ ու Կաղզուան։ Դրսից եկած բոլշևիկների ազդեցութեան տակ Սարըղամիշի զօրքի փոքր մասը կազմեց յեղափոխական կոմիտէ և փորձեց ձեռքը առնել իշխանութիւնը։ Զինուորների մէջ կարգապահութիւնը խանգարուեց։ Յեղափոխական կոմիտէն փորձեր արաւ յարաբերութեան մէջ մտնելու և «եղբայրանալու» սահմանի վրա գտնուող թիւրք զինուորների հետ։

Աւելի աղմկայոյզ եղան դէպքերը Նոր-Բայազէտում։ Մայիս 13-ին, բոլշևիկների դրդումով Բասար-Գեչարում կանգնած Համազասպի գնդի կամաւորների մի մասը ըմբոստացաւ և դիրքերը լքելով՝ գնաց Ղարանլուխ, որ շրջանի զինուորական կենտրոնն էր։ Այստեղ խռովարարներին միացան տեղի զինուորները։ Ըմբոստացած զօրքի գլուխը անցաւ ուսուցիչ Սարուխանեանը, որը դրդիչ ճառերով դրդեց ամբոխին տապալելու կառավարութիւնը։ Զինուորները ձերբակալելով զօրքերի հրամանատար զօր. Սիլիկեանին և ամբողջ սպայութիւնը՝ աղմուկով չարժուեցին դէպի Նոր-Բայազէտ և փոքրիկ ընդհարումից յետոյ դրաւեցին մայիս 17-ին։

Այսպիսով, գրեթէ միաժամանակ և միևնոյն ձևով, Հայաստանի զանազան կողմերում բռնկուեցին ապստամբութիւններ։ Ամէն տեղ ապստամբութիւնը կրում էր զինուորական բնաւորութիւն։ Տեղ-տեղ միայն միացան և բանւորները։ Պարզ էր, որ չարժումը կազմակերպուած էր նախօրօք. տեսական աշխատանք էր թափուած բանակում և բանւորութեան մէջ։ Շարժման ղեկավարները յոյս ունէին, որ կարմիր բանակը կը հասնի իրենց օգնութեան։ Ապստամբները բոլոր տեղերում միևնոյն նշանախօսքերն էին գործածում. — Ռուսաստանի կարմիր բանակը գալիս է ժողովրդին ազատելու «դաշնակների լծից». եղբայրական Ռուսաստանը հաց է ուղարկում սովահար Հայաստանին. արդէն Բագուից դէպի Հայաստան են շարժուել ալիւրով և նաւթով բեռնուած գնացքները և այլն։ Շատ գրաւիչ խոստումներ, և բոլշևիկները լաւ էին հաշուել ամբոխային հոգեբանութիւնը։ Սակայն, դէպքերը ստացան բոլորովին ուրիշ ընթացք։

Հայաստանի բոլոր կողմերից հասնող հեռագիրները խռովութիւնների և ապստամբութիւնների մասին մի պահ չփոթեցրին Երևանի ղեկավար շրջանները։ Ակներև էր, որ կառավարական մեքենան պատրաստ չէր